

ԵՐԸԺՉՏԱԳԻՏԱԿԱՆ

**Ս Ի Ջ Ն Ա Դ Ա Ր Ե Ա Ն
Հ Ա Յ Կ Ո Մ Պ Ո Ձ Ի Տ Ո Ր Ն Ե Ր**

14.

ԵՐԸԺՇՏԱԳԵՏ

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՏԻ



ասնեկերկրորդ դարին շահաւոր պերճախօս-ճարտարաբան և կրօնական փայլուն մատենագիր Ներսէս Լամբրոնացին հայ եկեղեցական պատմութեան զլիսաւոր դէմքերից մէկն է: Ծնուել է նա Լամբրոն անառիկ բերդում, 1154 թուին: Հայրը՝ Օշին Բ., Լամբրոնի և շրջակայքի տէրն էր և Սկևռայի պատմական վանքի հիմնադիրը, իսկ մայրը՝ Ծահնիգուխտը, Ներսէս Ծնորհալու կրտսեր եղբոր՝ Ծահնիի զուստըն էր:

Լամբրոնացու աշխարհական անունն էր Սմբատ. շատ փոքր հասակում ծանր հիււանդանում է. ծնողներն ուխտում են, որ երբ առողջանայ, նուիրեն Սկևռայի վանքին, որպէսզի ծառայէ Աստուծոյ տաճարում, բայց նրանք իրենց խոստումը չեն կատարում: Սմբատն աւելի ծանր հիւանդանում է: Այս անգամ ծնողները նրան յանձնում են Սկևռայի վանքին, ուր նա ուսանում է և կրթւում: Այնուհետև նրան տեսնում ենք Սաղրուի օՍ. Աստուածածին» վանքում, ուր ուսուցանում էր ժամանակի յայտնի գիտնական Յովհաննէս վարդապետը: Ամբողջ չորս տարի Սմբատը Սաղրու վանքում ուսման և գիտութեան մէջ աւելի է խորանում և զարգանում: Այդտեղ էլ նա հմտանում է յունարէն, լատինարէն և ասորերէն լեզուների մէջ, միաժամանակ լրում է մեկնութիւններ և սուրբերի վարքերն է թարգմանում: Սակայն, Սմբատի կեանքի և ուսման համար սկսում է մի նոր շրջան, երբ 12րդ դարի տաղանդաւոր բանաստեղծ-երաժիշտ Ներսէս Ծնորհալին իր մօտ է բերում Հասկիլայ և անձամբ հսկում նրա ուսման վրայ: Երկու տարի յետոյ Ներսէս Ծնորհալին 18 տարեկան Սմբատին կուսակրօն քահանայ է ձեռնադրում և կո-

չում է Ներսէս: Այնուհետև նա գնում է Սաղրուի վանքը, այցելում է Անտիոքի շրջանի մենաստանները և երկար ժամանակ ապրում է Սեաւ լեռան վանքերում: 1176 թուին, Գրիգոր Տղայ կաթողիկոսը նրան, 22 տարեկան հասակում, եպիսկոպոս է ձեռնադրում, իսկ որոշ ժամանակից յետոյ արքեպիսկոպոսի աստիճան տալով, նրան է յանձնում Տարսուսի և Լամբրոնի եպիսկոպոսութիւնը, միաժամանակ Սկևռայ վանքի առաջնորդութիւնը: Այդ շրջանում նա յաճախ ճամբորդում է Սիւս, Հասկիլայ և ամբողջ հողով լճում է հասարակական և եկեղեցական արդիւնաւէտ աշխատանքի: Սույն նա դառնում է Լեոն թագաւորի խորհրդատուն և խմբագրում է հայոց արքայի օտար երկրների հետ ունեցած թղթակցութիւնները, իսկ Հասկիլայում Գրիգոր Տղայ կաթողիկոսի հետ շարադրում յունաց պատրիարքին գրուած նամակները: Այդ շրջանումն էլ նա յոյների հետ եկեղեցական միութեան խնդիրն իրագործելու համար, մեկնում է Պոլիս, բայց յոյն գիտնական եկեղեցականների հետ չի կարողանում որոշ համաձայնութեան գալ, որով յուսահատ վերադառնում է Սկևռա վանքը և նուիրում հայոց եկեղեցու բարեկարգութեան գործին: Որոշ փոփոխութիւններ է մտցնում եկեղեցական արարողութիւնների մէջ: Այդ նորաձևութիւնների դէմ Լեոն թագաւորին խտաւ բողոքում են արևելեան եպիսկոպոսները, որոնց Լամբրոնացին կոչում է. «Տխմարք ու անկարգ»:

Ուշագրաւ է մի հանգամանք: Օշին Բ. իշխանը, Ներսէս Լամբրոնացու հայրը, ժառանգ է թողնում նրան մեծ հարստութիւն: Նա այդ գումարի մի մասը նուիրում է Սկևռայի ու Սաղրուի վանքերին, որոշ մասը տրամադրում է գրքերի և թարգմանութիւնների համար, իսկ մնացեալ գումարը յատկացնում է աղքատներին:

Լամբրոնացին երկտասարդական շրջանից նուիրում է զրականութեան և իր ժամանակի հայ մատենագրութեան էջերը հարստացնում է մի շարք ինքնուրոյն և թարգմանական երկերով: Իրանցից ուշագրաւ է իր պապի՝ Ներսէս Ծնորհալու կենսագրութիւնը: Դա անպաճոյճ մի պօէմա է և քնարական պարզ քերթուած, որի ճակատին կարդում ենք. «Գոյկեստ ներբողա-

կան պատմագրական բանիւ յաղագս վարուց մեծի Հայրապետին տեսան ներսխի կլայնցեոյ հայոց կաթողիկոսի»։ Դա ոտանաւորով գրուած հայերէն առաջին կենսագրական երկն է։

Նա յայտնի է նաև իր կրօնական թըղթերով և մեծ հմտութեամբ շարագրած բազմաթիւ մեկնութիւններով, որոնցից յատկապէս յիշատակենք՝ «Մեկնութիւն Սաղմոսի» (1178 թ.), «Մեկնութիւն Երզոց Երզոյն», «Մեկնութիւն Առակաց» և մանաւանդ «Մեկնութիւն պատարագի», իր գլուխ գործոցը, ուր երաժշտական եղանակի մասին ընդգծուած են այսպիսի ուշադրաւ տողեր. «... Ազգումն երաժշտական եղանակին . . . ընդոտուցեալ զարթուցանէ զմիտս ամենեցուն առ ի տենջումն շնորհին. քանզի չիք ինչ որ զկամս մեր յեղաշըջէ յուրախութիւն կամ 'ի տրամութիւն' որպէս զերգոցն ձայն, յորժամ որպէս պարտն է լինիցի. վասն այսորիկ և եկեղեցական աւանդութիւն ընկալաւ զայն»։ Անժխտելի է, որ հայոց պատարագի զարգացման պատմութիւնն ուսումնասիրելու համար Լամբրոնացու «Պատարագի մեկնութիւնը» ուրոյն արժէք է ներկայացնում, որի վերջաբանում ժամանակի հայ կեանքի մասին կան արժէքաւոր տեղեկութիւններ։

Աւանդ է թողել նաև ուշադրաւ ճանար, որոնց մէջ ցոլանում է նրա հետաքրքրական տաղանդը։ Դրանցից յայտնի է «Ատենարանութիւնը», որ խօսել է նա Հռոմկլայի ժողովում՝ եկեղեցիների միութեան համար։ Այդ երկով նա քարոզում է օտար քրիստոնեաների հետ եղբայրական սէր և միաբանութիւն։ Սակայն, նրա հետաքրքրական-ճարտասանական ձիրքը փայլում է «Հոգեգայտեան և Համբարձման» ներբողների մէջ։

Լամբրոնացու ստեղծագործութիւնների մէջ պատուաւոր տեղ է գրաւում նաև քաղաքական օրէնքների հաւաքածուն, որ կառուցուած է յունական օրէնքների վրայ։ Դա Կիլիկիայի Ռուբրինեանց շրջանում կազմուած հայերէն առաջին օրէնքների ժողովածուն է, ինչպէս այդ ցոյց են տալիս յիշատակարանի հետեւալ տողերը. «Ձայն ծայրաքաղ աւրինադրութիւնքս տառապեալ եպիսկոպոս Տարսնի թարգմանեցի ի ձերացեալ հելլենացի մատենէ, թուին

Չեմ (645 + 551 = 1196) . . . քաղաքի աւրէնս ոչ գտաւ ի մէջ հայոց, ոչ յեկեղեցիս և ոչ առ իշխանս»։ Չեռագրի յիշատակարանները խոշոր արժէք են ներկայացնում այն տեսակէտից, որ նկարագրում են ժամանակակից պատմական անցքերը։

Լամբրոնացին հարստացրել է նաև իր ժամանակի թարգմանական գրականութեան էջերը։ Առաջին անգամ նա է, որ լատին. բէնից հայերէն է թարգմանել կաթողիկե. եկեղեցու «Կարգաց զիրքը», «Թագաւոր օրհնէքը», «Նաւօրհնէքը» և ուրիշներ։

Վաստակաւոր հոգևորականը հայ ժողովրդին նուիրել է նաև մի խումբ գարգացած, լուսաւոր աշակերտներ, որոնցից յայտնի են Յովհաննէս, Սամուէլ և Թաւատուր գրիչները. վերջինս իր ուսուցի մահուան առթիւ գրել է մի նշանաւոր ողբ ներսէս Լամբրոնացու կենսագրական տուեալների համար պարտական ենք նաև Ակեռայի վանքի միաբան Գրիգոր Ակեռացուն, որ իր դարաշրջանում յայտնի է դարձել որպէս մատենագիր և երաժշտագետ։

Լամբրոնացին իր դարաշրջանի ժողովրդի սէրն ու համակրանքը վայելում է նաև իրրև երաժիշտ։ Նա օժտուած լինելով երաժշտական փայլուն ձիրքով, ձայնագրում է կրօնական բանաստեղծութիւններ՝ եկեղեցում երգելու համար։ Նրա աւանդ թողած երաժշտութիւնից յիշատակենք՝ «Համբարձաւ», «Նորոգեալ կղզիք», Որդւոց և թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսւորչին, մանաւանդ նշանաւոր է Ջատկուականոնի օրհնութիւնը։

«Այսօր յարեաւ ի մեռելոց
Փեսսան անմահ եւ երկնաւոր.
Քեզ աւետի խնդուրեան,
Հաւսն ի յերկր եկեղեցի»։

Կիլիկիայի հայ ժողովրդի այս վաստակաւոր վանականը վախճանուած է 45 տարեկան հասակում, Տարսնում, սրտի տաղանապից։

12-13րդ դար
15.
ԵՐԱՎՏՏԱԳԷՏ
ԳՐԻԳՈՐ ԱՆԵՌՈՍԵՐ

12րդ դարի վերջերին և 13րդ դարի սկզբներին Կիլիկիայի Ակեռայի վանքում

ապրել է և ստեղծագործել մի այլ նշանա-
 ւոր մատենագիր: Դա Գրիգոր Ակեռացին
 է, մշակութային գեղեցիկ ձիրքով օժտուած
 անձնուէր և հայրենասէր մի վանական, որ
 նուիրուել է նաև քաղաքական գործու-
 նէութեան և Ակեռայի վանքի միաբանների
 և հայ ժողովրդի մէջ վառ է պահել ջերմ
 հայրենասիրութեան ոգին:

Նա հարստացրել է նաև իր ժամանակի
 հայ գրականութեան էջերը: Նրա վաստակ-
 ների մէջ ուրոյն տեղ է գրաւում Ներսէս
 Լամբրոնացու կենսագրութիւնը, որ շարա-
 գրել է 1205 թուին: Թողել է նաև կրօնա-
 կան երկեր, որոնցից յիշատակենք «Բան
 գովեստի պատմագրաբար յաղագս ծննդեան,
 սննդեան և քաղաքաւարութեան և վերա-
 փոխման ամենասուրբ կուսին» խորագրով
 երկը և «Ճառ Քրիստոսի յարութեան վրայ»,
 որոնք ցայտուն գաղափար են տալիս նրա
 գրական արուեստի էութեան և հետորա-
 կան ինքնուրոյն ձիրքի մասին:

Հայ երաժշտութեան պատմութեան մէջ
 ևս վաստակաւոր մատենագիրն իր համեստ
 էջն ունի: Նա է ձայնագրել «Արեգական
 արդարութեան» (Յովհաննու Կարապետի)
 շարականը, որ մինչև օրս էլ երգւում է
 եկեղեցում և գրաւիչ է իր պարզութեամբ,
 նուրբ երանգաւորումով և զգացմունքի
 ջերմութեամբ:

13րդ ԴԱԻ

16.

ԵՐԱԺՇՏԱԳԷՏ ԵՈՎՍԷՓ

Որքան աղքատ են միջնադարի հայ
 երաժշտութեան պատմութեան մասին ար-
 ձանագրուած վաւերական տուեալները,
 նոյնքան խօսուն են հայ ձեռագիր տաղա-
 րանների յիշատակարանները, որոնք մինչև
 օրս խնամքով պահպանել են մի շարք հայ
 երգահանների անունները, որոնք իրենց
 ստեղծագործութիւններով զարկ են տուել
 միջնադարի հայ երաժշտական արուեստին:
 Այդ նշանաւոր դէմքերից մէկն է Դրազարկի
 զպրոցի երաժշտապետ Յովսէփը: Չնայած
 հայ մատենագրութեան պատմութեան մէջ
 չի նկարուած նրա կերպարը, բայց իր ա-
 նունը դարեր շարունակ, ամբողջ 714 եր-
 կար տարիներ, պահուել է 1241 թուին
 գրուած մի ձեռագիր տաղարանում:

Ընդգծենք և այն, որ այս նշանաւոր
 արուեստագէտի մասին նոյնիսկ չի յիշա-
 տակում երաժշտագէտ Սպիրիդոն Մելիք-
 եանն իր «Ուրւագիծ հայ երաժշտութեան
 պատմութեան» խորագրով երկում, չնա-
 յած, որ այդ արժէքաւոր գրքոյլը խօսում
 է ամենահին ժամանակներից մինչև մեր
 օրերի երաժշտական արուեստի պատմու-
 թեան մասին:

Վաստակաւոր երաժշտագէտի մասին
 կենսագրական տեղեկութիւններ, դժբախ-
 տաբար, չկան: Նոյնիսկ յայտնի չէ նրա
 ազգանունը: Միայն 1241 թուին բեղմնա-
 ւոր գրիչ Յովհաննիսի ձեռքով գրուած
 «Երգարան Տաղաց» ձեռագրի յիշատակա-
 րանում, այն էլ շատ սեղմ, գտնում ենք
 որոշ տեղեկութիւններ, որոնցից պարզոււմ
 է, որ նա ապրել է Կիլիկիայում, 13րդ
 դարի առաջին շրջանում, Հեթումի թագա-
 ւորութեան ժամանակ և հանդիսացել է իր
 ժամանակի ստեղծագործող երաժշտապետ-
 ներից մէկը: Բայց մի հանգամանք էլ ա-
 ւելի արժէքաւորում է արուեստագէտի
 կերպարը: Նա ո՛չ միայն օժտուած է եղել
 երաժշտական բարձր մշակոյթով, այլև
 ծանօթ լինելով եկեղեցական երաժշտու-
 թեանը, խոշոր աշխատանք է կատարել,
 ստեղծագործելով զլիսուորապէս զուտ հայ-
 կական ոճով, և իր ինքնուրոյն արուեստով
 զարկ է տուել հոգևոր երաժշտական մշա-
 կոյթին: Ահա թէ ինչո՞ւ նրա արտագրու-
 թիւնները միջնադարեան հոգևոր երաժշ-
 տութեան հարցերը լուսաբանելու տեսակէ-
 տից խիստ արժէքաւոր են: Այդ գծով էլ
 նա այսօր առանձին հետաքրքրութիւն է
 ներկայացնում:

Այս տաղանդաւոր երաժշտագէտի յայտ-
 նութեան համար պարտական ենք նախ
 փարիզի Նախկին կայսերական մատենադա-
 րանի թիւ 50 (հին ցուցակով) ձեռագիր
 Տաղարանին: Դա կրօնական նիւթեր պա-
 րունակող ամենահին տաղարաններից մէկն
 է, որի յիշատակարանում կարգում ենք
 հայկական երաժշտութեան պատմութեան
 համար առանձին արժէք ունեցող հետեւեալ
 տողերը. «Կատարեցաւ Երգարանս Տաղաց
 ձեռամբ Յոհաննիսի յետին և յոգնամեղի Ի
 թուականիս հայոց ՈՃՂ (690 + 551 =
 1241), Ի վանս մեծ ուխտի և հուշակաւոր
 անապատս Դրազարկ կոչեցեալ, Ի թագա-

ւորութեանն Հեթմոյ՝ որդոյ կոստանդեալ
 եւ է առաջնորդ ուխտիս մեծն Բասիլիոս՝
 եղբայր թագաւորին Հեթմոյ . . . գտեալ
 աղէկ աւրինակ յոյժ գեղեցիկ գտան միոյ
 երաժշտագետի Յուսէփ կոչեալ և կարի
 հասու ամենայն իմաստից երաժշտից, մինչև
 ի բաւանդակն, որ(ոյ) յաւուրս ոչ գտանի
 հանգոյն . . . Յիշեսջիք ի տէր, և զՅուսէփ
 երաժշտագետ, որ զաւրինակն անձանձիր
 շնորհեաց»:

Հ. Բարսեղ Վրդ. Սարգսեանի խմբա-
 գրած «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց»
 բանասիրական արժէքաւոր գրքի Բ. հատո-
 րում կարգում ենք, որ Վենետիկի Մխի-
 թարեան Միաբանութեան նշանաւոր հայա-
 գէտ, լեզուաբան և բանաստեղծ Հ. Արսէն
 Բագրատունին (1790 - 1866) Փարիզի Ազգ.
 Մատենադարանի No. 50 և այլ ձեռագրերի
 վրայից 1824-5 թուերին ընդօրինակելով
 կազմել է Վենետիկի Մխիթարեանների
 Մատենադարանի No. 294 ձեռագիրը, որ
 կոչուում է «Հաւաքուած բանից նախնեաց
 Ա.», որի մէջ է գտնուում մի տաղարան:

Նշանակալից է այն, որ 1241 թուին
 տաղարանը գրող Յովհաննէս գրիչը ձեռա-
 գրի յիշատակարանում ընթերցողներին թա-
 խանձում է՝ յիշել «կարի հասու ամենայն
 իմաստից երաժշտից . . . երևելի երաժըշ-
 տագետն» Յովսէփ, որ միշտ իր կոչման
 բարձրութեան վրայ կանգնած՝ ընդգրկել է
 մէկ նպատակ նպաստել ժողովրդի գեղար-
 ուեստական դաստիարակութեանը:

Յովսէփ երաժշտագետի մասին կար-
 դանք նաև Վիեննայի Մխիթարեան գիտ-
 նական վանականներից Հ. Յակոբոս Տաշ-
 եանի գրած հետեւեալ տողերը. « . . . Մեր
 ձեռագիրն առաջին օրինակներէն ըլլալու է
 (1220-50) տարեաց մէջ»: Ծիւղդ այս միջո-
 ցին կը յիշուի համբաւաւոր Յովսէփ երաժըշ-
 տագետ Դրազարկի վանաց, որուն գրած
 մէկ գանձարանը կը գովուի 1241 Յիշատա-
 կարանի մը մէջ (Ձեռագիր Վիեննայի Մխի-
 թարեան, № 166):

Ի՞նչ են ընդգծում, սակայն, 1241
 թուին գրուած պատմական ձեռագրի յիշա-
 տակարանի տողերը: — Ա՛յն, որ՝

1) Երաժշտագետ Յովսէփն ապրել է և
 ստեղծագործել 13րդ դարի առաջին շրջա-
 նում:

2) Արուեստագէտն ունեցել է երա-

ժըշտական բարձրագոյն կրթութիւն և իր
 ստեղծագործական հարուստ յոյզերով,
 նուրբ ճաշակով և խոր ապրումներով հան-
 դիսացել է իր դարաշրջանի նշանաւոր ե-
 րաժշտագէտը:

3) Իբրև ստեղծագործող՝ նա զբաղուել
 է հայկական եղանակների ձայնագրութեամբ
 և սրպէս հմուտ և նուրբ արուեստագէտ
 երաժիշտ՝ մեծ համբաւ է վայելել ժամա-
 նակակիցների շրջանում, ինչպէս այդ վկա-
 յում են հետեւեալ տողերը. «Եւ կարի հա-
 սու ամենայն իմաստից երաժշտից մինչև
 ի բաւանդակն, որ(ոյ) յաւուրն ոչ գտանի
 հանգոյն»:

4) Նա մէկն է 13րդ դարի այն լուա-
 գոյն երաժիշտներից, որն իր կեանքն ամ-
 րողջապէս նուիրել է հայ եկեղեցական ե-
 րաժշտութեան վերելքին:

Արձանագրենք մի կարևոր երևոյթ ևս:
 Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան
 մշակներից Հ. Արսէն Բագրատունին վկա-
 յում է, որ վանքի Մատենադարանում
 գտնուած ձեռագրում, երաժշտագետ Յով-
 սէփի մասին գրուած տողերի զիմաց՝ լու-
 սանցքում աւելացուած է պարսիկ ձայն,
 ասորի ձայները պարսկական և ասորական
 եղանակներ են, որոնցով զբաղուել է երա-
 ժըշտագետը: Այս տողերը խիստ ուշագրաւ
 են և ընդգծում են մի էական հանգամանք,
 որ երաժիշտ Յովսէփը Դրազարկի պատմա-
 կան վանքում զբաղուել է ո՛չ միայն հայ-
 կական եղանակների ձայնագրութեամբ,
 այլև օգտագործել է պարսկական և ասո-
 րական եղանակների ձայները, մի երևոյթ,
 որը բացառիկ արժէք է ներկայացնում և
 առանձին կարևորութիւն ստանում հայ
 միջնադարեան երաժշտութեան զարգացման
 հարցերը լուսարանելու և, որ էական է,
 պարսկական, ասորական և հայկական ե-
 րաժշտութեան փոխ-յարաբերութիւնները
 մեկնաբանելու տեսակէտից:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարունակելի՛ 9)

